

փական արտի երեւակայական, չինծու եւ, ամենալաւ դէպքում, վարկիւրդ ցուերը:

Չարմանալի մարդիկ են մեր երիտասարդ քնարերգուները.—եթէ հանճարները խօսում են իրանց արտի, իրանց սիրոյ, իրանց հիասթափութեան մասին եւ աշխարհը լսում է նրանց, դըրանք էլ կարծում են, թէ աշխարհը պարտական է լսել իրանց վիշտն ու սէրը, որովհետեւ, դրանց կարծիքով, ամեն մարդ, որ քնարերգական ոտանաւոր է գրում, հէնց լոկ դրանով արժանի է լինել ամբողջ տիեզերքի կենտրոնը:

Ոչ մի ակնակ զնարկերգու չէ ուղում բաւականապէս դրանք աւելի համեստ դերով, նա չէ ուղում զգալ մահականացունքի նման,— ոչ, նա ամեն է եւ զգում է անմահների նման:

Այդ էլ ղեկադէստութեան շորշոփներէն է, ղեկադէստութեան, որ փչացել է,—յոյս ու նենք՝ ոչ ընդ միշտ,—պ. Արամ Չարքի ձիրքը, որովհետեւ ձիրք անկասկած ունի պ. Արամ Չարքի, ինչպէս ընթերցողը կարող էր նկատել հէնց զքեզ համար բնաբան ընտրված ոտանաւորի թարգմանութիւնը:

Ով որ ընդունակ է գրել այնպիսի ոտանաւորներ, ինչպէս «Հայ երգչին», «Որբերի աղօթքը», «Մայրերն են խօսում», «Պատմիր Աստուծոյ», «Եւ քեզի համար», «Ինչպիսի խորհրդի», «Լեռնային», «Ասպնէք նորան», «Կու գայ դարձնալ վառ դարուն»,—նա օժտված է անկասկած աստուածային կայծով, եւ մեր անկեղծ ցանկութիւնն է, որ այդ կայծը չը հանդիսանայ ղեկադէստութեան ժողովրդի տակ, այլ պայծառ բողբոջով մեր բանաստեղծական գրականութեան խաւար հորիզոնում:

Բայց ղեկադէստութեան ազդեցութիւնը աղտոտվել, ցանկալի է, որ պ. Արամ Չարքի հոգ տանի նաեւ ոտանաւորի ձեւի վրա: Զեւի զգացմունք, զեղեցիկ ճաշակ նա անշուշտ ունի,—այդ պատճառով եւս աւելի հեշտ է նրա համար ազատել իր ոճը բառերի անբնական հարստութիւնից, թիրաբեայ եւ ոտանաւոր բարդութիւնի անշուշտ զուգորդութիւնից (որ. «Ձայն եմ տալիս» եւ «Կը մօտենայ»)—իր ներկայ ժամանակ—մի եւ նոյն ոտանաւորի մի եւ նոյն տան մէջ) եւ այնպիսի գրեկական ձեւերից, ինչպէս «Ապրիլ» (ապրիլի) եւ այլն:

Տ. Յ.

Նոր ստացված հրատարակութիւններ.—1) «Բրիտանական Կարգադատութիւն Հայաստանից ասպետական սուրբ եկեղեցւոյ, գաղաղութ. երկրորդ տպ. արխ. Գ. Կ. Ներ-Պարթիւնից», 86 էր. Գ. 25 Կ. թիֆլիս 1901. 2) А. И. Терп-Каспаровъ. «Краткій курсъ всеобщаго права» 27 стр. Կ. 25 Կ. Баку 1900. 3) «Отчеты г. министра земледѣлія и государственныя имущество о дѣятельности Кавказскаго филантропическаго комитета въ 1899 г.» Тифлисъ 1900 г.

կան կապեր ունէր եւրօպական շատ վեհապետների հետ. ի միջի այլոց, նա Լեօպոլդ կայսրի քննական էր: Որքան եւ այդ կապերը ազդեցիկ դիրք տային նրան, բայց Վիեննայում իշխողները եւ ղեկավարողները եզրփոխեցին էին եւ առանց այդ կրօնաւորների հաճութեան կայսրը ոչինչ չէր անի:

Եւրօպայում զինուորական կրթութիւնն ստացած հայ ազնուականը շատ լաւ ծանօթ էր քաղաքական հանգամանքներին եւ նրան մենք կարող ենք համարել նշանաւոր ղեկավարական գործիչ: Այդ ընդունակութիւնը նա ցոյց տուեց իր ճանապարհորդութեան ժամանակ: Վիեննայում տեսակցութիւն ունենալով կայսրի պալատական հոգեւորականներից մէկի հետ, նա իմացաւ, որ Լեօպոլդը անշարժ էր համարում կուրբիւրստի առաջնորդութիւնը ընդունել մի այնպիսի ժամանակ, երբ նոր էր խաղաղութեան դաշինք կապվում թուրքիայի հետ: Ապա, հանելով Ազրիանուպոլիս, Օրին ներկայացաւ ֆրանսիական դեսպանին, հրաւիրվեց նրա մօտ ճաշի եւ խօսակցութիւն ունեցաւ ընթացիկ քաղաքական հարցերի մասին:

Իր իսկական ծագումը եւ ճանապարհորդութեան նպատակը Իսթայլէ Օրին, ի հարկէ, թաքցնում էր ամենայն խնամքով: Նա գործում էր մի զարմանալի զգուշութեամբ: Միայն մեծ վեգիւր, որին ներկայացաւ Օրին մի գանդաւառ տղու համար, հասկացաւ թէ նա ֆրանսիացի է: Բայց Կ. Պօլսում, երբ Օրին գնաց տեսնելու սուլթանական պալատը (սուլթանը սուլթանաբար Ազրիանուպոլիս էր ապրում), թուրք բարձրաստիճան պաշտօնեաներից մէկը մեծ վեգիւրի ներամուտիւնը չուներեցաւ եւ ընդունելով այցելուին ֆրանսիացի, նրա հետ խօսակցութեան բռնվեց ժամանակակից յուզող քաղաքական հարցերի, Կարթլիցի դաշնագրութեան մասին, պատմեց թէ որպիսի

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, դեկտեմբերի 16-ին

«Մշակ» 231 համարում Միակարգ գրում է, որ մենք, հայեւսեաներ, քննելով Կուրբիւրստի նորայէն ս. Աստուածածնի եկեղեցու նախկին երէցփոխ Եսայի Աբրահամեանի հայինքը, գտել ենք 5,000 ռուբլու պակասորդ, բայց ոչ մի գործնական միջոցի չենք դիմել, ուստի հրաւիրում է հոգեւոր իշխանութեան եւ մեր ծխականների ուշադրութիւնը այս հանդամանքի վրա:

Մենք ընտրվեցինք հաշուառեսներ 1897 թվականին, իսկ պ. Աբրահամեանի երէցփոխական վեց տարվայ հաշուառեսները ստացանք կոնսիստորիայից 1898 թվականին: Մի ամբողջ տարի քննելով այդ վեց տարվայ հաշիւները մենք գտանք, որ կատարվել են բազմաթիւ գեղծումներ եւ կայ մօտ 6,000 ռուբլու պակասորդ գումար, որի մասին կազմելով մանրամասն արձանագրութիւն, ներկայացրինք 1899 թվին եւ ինտրիկները կոնսիստորիայից՝ անել պատշաճաւոր անօրէնութիւն. բայց մինչեւ այժմ կոնսիստորիան մեր արձանագրութեան ոչ մի ընթացք չէ տուել, չը նայելով որ ներկայացնելու օրից անցել է մի տարուց աւելի: Շատ լաւ ծանօթ լինելով գործերի դրութեան հետ ընտրվին յոյս էլ չունենք, որ կոնսիստորիան ինքնակամ կերպով Աբրահամեանի գործերին մի որ եւ է ընթացք տայ, որովհետեւ պ. Աբրահամեանի մի քանի գեղծումները կատարել է չնորհի կոնսիստորիայի անտարբերութեան եւ անհոգութեան:

Որպէս զի այս բանը մեր կողմից անփաստ ամբաստանութիւն չը համարվի կոնսիստորիայի դէմ—մենք կը քննելք այստեղ միայն երկու փաստ, քանի որ լրագրի նեղ էջերը թոյլ չեն տալիս մեզ աւելի ընդարձակ գրել ու հրապարակ անել այն բոլոր գեղծումները, որոնք կատարվել են մեր եկեղեցու երէցփոխական գործերի մէջ:

1) Կոնսիստորիան, սկսած 1892-ից մինչեւ 1897 թվականը (1892 թվականից առաջ մեզ ոչինչ յայտնի չէ), իւրաքանչիւր տարի իր գործակալներին միջոցով կանոնաւոր կերպով ուղարկում է երէցփոխ Աբրահամեանին մի մի ժառանգ ժապաւնեայ մատենան, որ նա այդ մատենաների մէջ մտցնէ եկեղեցական դատական հայինքներ, սակայն կոնսիստորիան, ուղարկելով նոր մատենան երէցփոխ Աբրահամեանին, չէ պահանջում նրանից նախկին տարվայ մատենան, որտեղ պէտք է գրված վերջացած լինէին բոլոր դրամական հայինքները. երէցփոխ Աբրահամեանն էլ, սակայնով որ չը կայ ոչ մի իշխանութիւն եւ ոչ էլ հայիւ պահանջող, եկեղեցական դրամներին հետ պահվում է այնպէս, ինչպէս իր սեփականութեան հետ, իսկ կոնսիստորիայից ստացած ժապաւնեայ մատենաները մաքուր կերպով, առանց մի տող անգամ գրելու, պահում է մինչեւ 1897 թվականը, յետոյ երկու-երեք չաքաթվայ մէջ գրում ու ներկայացնում է ծխական ժողովին եւ ապա մեզ, հայեւսեաներին, իբրեւ իսկական մատենաներ՝ քննելու համար:

2) Թէ «Մշակը» եւ թէ «Արձագանքը» իր ժամանակին բողբոջում էին, որ պ. Աբրահամեան հայիւ չէ տալիս, որ նրա երէցփոխական ժամանակամիջոցը վաղուց լրացել է եւ

սարսափ էին տարածել թուրքերի մէջ քրիստոնեաների յաղթութիւնները, ինչպէս ամենքը սպասում էին թէ յաղթողները կը հասնեն Կ. Պօլսին, ինչպէս շատ թուրքեր իրանց հարստութեանը երջանակը էին Պրուսեայի քաղաքը: Սրեւում է, որ Օրին տեսնվել եւ Կ. Պօլսի հայոց պատրիարքի հետ, որ այդ ժամանակ Մեղրիսեղեկ Սուպիւն էր: Բայց շատ հաւանական է, որ նա իր ծրագիրները չը յայտնեց պատրիարքին, նախ որ թուրքացի Հայաստանը չէր մտնում նրա ծրագրի միջեւ, երկրորդ, որ Կ. Պօլսի հայութեան մէջ Օրինի անցումը այդ խառն ու փոթորկալից ժամանակներում հազիւ թէ որ եւ է համակրութիւն գտնէին: Պատրիարքը միայն նրանով օգնեց Օրինին, որ յանձնարարեց նրան էրզրում գնացող երկու թուրք օֆիցէրներին, որոնց հետ էլ նա ճանապարհ ընկավ: Անցաւ թուրքացի Հայաստանով, սակայն ոչ մի տեղ կանգ չառաւ ու չը խօսեց հայերի հետ պատրաստվող գործի մասին: Նա չտապում էր պարսկական Հայաստանը եւ 1699 թվ. ապրիլի 4-ին արդէն Երեւանում էր:

Օրին շատ լաւ էր ճանաչում իր հայրենիքը: Իբրեւ քաղաքական եւ զինուորական գործերին հմուտ մարդ, նա հասկանում էր, որ հայ ժողովրդի մէջ ընդհանրապէս չը կայ պատրաստութիւն գործելու այնպէս, ինչպէս ինքն էր ծրագրել, այսինքն մի համատարած աղբւրսմարտութեան միջոցով: Եւ մենք ասանք, որ հայ ազգը ընդհանուր առմամբ այդպիսի յեղափոխական արամագրութիւն չունէր պատրաստած իր մէջ: Մնում էր զիմը երկրի այն կողմերը, ուր կային ռազմիկ ոյժեր: Այդպիսի տեղ մի հատ էր ամբողջ պարսկական Հայաստանում—այն լեռնաշղթաներ, որ պարունակում էին մէջ Ղարաբաղը եւ Սիւնիկը երկրներ: Այնտեղ էր շտապում Օրին: Բայց կար մի կարեւոր հարց, որ պէտք էր լուծել նախ քան եւ

կոնսիստորիան նոր ընտրութիւն չէ նշանակում: Կոնսիստորիան, անուշադիր թողնելով այդ բողբոջները երկար ժամանակ վերջապէս 1897 թվականին նշանակում է ծխական ժողով՝ երէցփոխ Աբրահամեանի հայինքը քննելու եւ նոր երէցփոխ ընտրելու համար: Մեր ծխականների, հետեւելով ընտանեկան, բարեկամական, ազգասիրական, բարոյական, մարդասիրական եւ այլն եւ այլն ձեւերին՝ առանց քննելու պ. Աբրահամեանի հայինքը, վերնաւորում են նրան: Բայց կոնսիստորիան, մի երկու ծխականի բողբոջի պատճառով՝ չէ կարողանում հաստատել այդ ընտրութիւնը, իբրեւ ապօրինի ընտրութիւն եւ նշանակում է մի երկու ամսից յետոյ երկրորդ ծխական ժողով: Մեր ծխականները, այս անգամ էլ հետեւելով իրանց աւանդական ձեւերին, նորից երկրորդ անգամ վերնաւորում են պ. Աբրահամեանին եւ կոնսիստորիան էլ պատրաստվում է հաստատել այդ ընտրութիւնը: Ահա այդ ժամանակ այդ երկու հոգի ծխականներին օգնութեան է հասնում «Պօլսեմէն» անուանված օրէնքը, եւ նրանք, հիմնվելով օրէնագրի մի քանի յօդուածների վրա՝ բողբոջում են կոնսիստորիային, որն արդէն ստիպված է լինում, այդ յօդուածների զօրութեամբ, բոլորովին արգելք դնել Աբրահամեանի վերնաւորութեանը եւ նշանակում է երկրորդ անգամ ծխական ժողով մի երկու ամսից յետոյ: Երրորդ ժողովում կարգացվում է կոնսիստորիայի պաշտօնական թուղթը, որով յայտնվում է մեր ծխականներին, թէ նրանք իրաւունք չունեն վերնաւորել Աբրահամեանին իբրեւ անարժան երէցփոխական պաշտօնին եւ ընտրվում է մի ուրիշ երէցփոխ, իսկ մենք, տողերիս գործները, եւ պ. Բ. Ուլիբեգեան, որը հէնց սկզբից, պ. Աբրահամեանի հայինքը քննելիս հրաժարվեց անանկիւրեց, ընտրվում ենք հաշուառեսներ: Չը նայելով, որ օրէնքը այսպէս խախտաւ կերպով վնասում է պ. Աբրահամեանին երէցփոխական պաշտօնից, սակայն էլ մեր եկեղեցին չէ ապաւովում նրա ձեռքից, չնորհի կոնսիստորիայի անկարգութեան: Մինչդեռ 1897 թվականին ծխական ժողովները միմեանց յաջորդում էին նոր երէցփոխ ընտրելու եւ պ. Աբրահամեանի վերնաւորութիւնը արդէն կառածելի էր դառնում ու մինչեւ անգամ այն ժամանակ, երբ արդէն նա հեռացրված էր երէցփոխական պաշտօնից—կոնսիստորիան իրաւունք է տալիս նրան եկեղեցական դրամներից մօտ 3000 ռուբլի ծախել եկեղեցու արտաքին պատերը աւաղելու համար եւ այս բոլորը կատարվում է առանց ծխական ժողովի համաձայնութեան (Այս 3000 ռուբլին մեր գտած հոգեւորի մէջ չէ մտնում եւ ոչ էլ ձեռնամուխ եղանք այս հաշուի քննութեանը): Շնորհիւ կոնսիստորիայի տուած այդ ապօրինի իրաւունքի, պ. Աբրահամեանը էլի մօտ մի տարի երէցփոխի պաշտօն էր վարում, թէպէտ երէցփոխ անունը մի ուրիշն էր կրում:

Մեր այս պարզ բացատրութիւնից յետոյ ընթերցողը պ. Միակարգի հետ կարող է եզրակացնել թէ, արդեօք սպասելի է թէ կոնսիստորիայի եւ թէ մեր ծխականների կողմից մի որ եւ է գործնական միջոցի իրենք պ. Աբրահամեանի կատարած գեղծումներին համար:

Սարգիս Խարազեան
Յարութիւն Պետրոսեան

րեւանից հեռանալու: Դա կաթօլիկութիւն ընդունելու հարցն էր, Օրին ծրագրի ամենահիմնաւոր կէտերից մէկը: Անհրաժեշտ էր կրօնակցական միութիւն ստեղծել այն եւրօպական ազգերի հետ, որոնք յանձն էին առնում զլուրս բերել հայերի ազատութեան գործը: անհրաժեշտ էր դա մանաւանդ այն պատճառով, որ գործի գլուխ պիտի անցնէր Հոսթի պապը: Գաղաքական շարժ պահանջում էր մի գոհ, որի վերաբերմամբ համաձայնութիւն էին յայտնել երեք հայ կաթօլիկոսներ: Եւ Օրին ուղեւորվեց Էջմիածին:

Այդ ժամանակ կաթօլիկոսը Նահապետ էր: Կաթօլիկ աղբիւրները միաբերան հաւատացնում են, թէ Նահապետը հպատակութեան թուղթ էր ուղարկել պապին: Եթէ դա միանգամայն ճիշդ լինէր, եթէ կաթօլիկոսը սրտով յարած լինէր կաթօլիկութեանը՝ Օրին ոչինչ ղժուարութիւն չը պիտի գտնէր Էջմիածնում, Նահապետին կը մնար նորից մի թղթով հաւատացնել պապին թէ իր հպատակութիւնը գործնական փաստերով էլ կապացուցանէ, եւ Օրին միանգամայն ապահոված կը համարէր իր ծրագրի այն մասը, որ դաւանաւորութեան էր վերաբերվում: Բայց հայ քաղաքական գործիչը հեռացաւ Էջմիածնից բոլորովին հիասթափված: Նա համոզվեց, որ Նահապետին հեռաքրքրող ոչ կաթօլիկութիւնն էր, ոչ էլ դրա հետ կապված ազգային ամենակարեւոր հարցը, այլ պարսիկ պաշտօնեաների կաշառելու միջոցով իշխելը: Այս իրողութիւնը ցոյց է տալիս, որ չը պէտք է առանձին կարեւորութիւն տալ այն թղթին, որ Նահապետը ուղարկել էր Հոսթի: Եղուիսներից աջակցութիւն գտած կաթօլիկներ սիրտ սիրաշահելու համար դրած պիտի լինի հպատակութեան թուղթը, որի հետեւանք լինէր կաթօլիկ կրօնաւորների հետ հաշտ ապրելը: Բայց երբ եկաւ վճռական րօ-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօսկվայի Լազարեան ճեմարանի մասնագիտական դասարանների խորհուրդը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Եւ նկատու ունենալով, որ 1902 թվին լրանում է Լազարեան ճեմարանի մասնագիտական դասարանների գոյութեան երեսնամակը, այդ դասարանների խորհուրդը դիմում է այն բոլոր անձերին, որոնք աւարտել են մասնագիտական դասարանները, եւ խնարհաբար խնդրում է նրանց հաղորդել իրանց մասին հետեւեալ տեղեկութիւնները.—

1) անունը, հայրանունը եւ ազգանունը, 2) ուսումն աւարտելու ժամանակը, 3) հասարակական դիրքը (պաշտօնը, զբաղմունքը եւ այլն): Առաջարկված հարցերի պատասխանները կընդունվեն խորհուրդի կողմից: Եւ կը մտնեն ճեմարանի մասնագիտական դասարանների պատմութեան մէջ, որ պատրաստվում է տպագրութեան համար:

«Новое Время» լրագիրը հաղորդում է, թէ մօտ օրերում Բագուի վրայով Պարսկաստան ուղեւորվեցին մի խումբ ռուս ինժեներներ, որոնք պարսկական կառավարութիւնից արտոնութիւն են ստացել շահագործելու Պարսկաստանի հանքերը: Յիշված ինժեներները, պ. Բօշկովսկու ղեկավարութեամբ, առ այժմ պէտք է զբաղվեն հետազոտելով այն տեղերը, ուր գտնվում են հանքեր:

Երկրագործութեան ղեկարգումները տեղեկութիւն տուեց կովկասեան Ֆիլիսէրային կօմիտէտին, որ երկրագործութեան միջոցաւորութիւնը թոյլ է տուել առանց մաքսի բերել տալ արտասահմանից «Verdet Excelsior» անուանված բազալտութիւնը, որ գործ է ածվում սուսկային հիւանդութիւնների դէմ խաղողի վազերը եւ պաղատու ծառերը բժշկելու:

Երկրագործութեան միջոցաւորութիւնը, կամենալով նպաստել կանոնաւոր եւ արդիւնաւէտ թունապահութեան զարգացմանը գիւղերում, մտադրութիւն ունի բանալ գիւղերում թունապահութեան ուսումնարաններ, որտեղ գիւղացի մանուկները կարողանային թէ տեսականապէս եւ թէ գործնականապէս ծանօթանալ զանազան ընտանի թուռները պահելու ամենալաւ եղանակի հետ:

Մօսկվայի բժշկիկների ընկերութեանը իրաւունք է տուած կազմակերպելու կանանց ֆարմացեւտական կուրսեր: Ընկերութիւնն արդէն սկսել է կանոնագրութեան ծրագիրը, որով կուրսերը կունենան երկամայ դասընթացը եւ իւրաքանչիւր ուսումնական տարին—երկու սեմեստր. առաջին սեմեստրը կը սկսվի

պէն, երբ պէտք եղաւ գրածը գործով ապացուցանել, կաթօլիկոսը բաց է բաց մերժեց կաթօլիկականութիւնը:

Իսթայլէ Օրին ուղեւորվեց իր հայրենի տուն: Այստեղ երեւում է մեծ գաղափարային ամբողջ հողով նուիրված մարդ, որ դիտէ թէ ձեռնարկութեան աղոյթութեան համար պէտք է ուրանալ ծնողներին ու ազգականներին անգամ Մի գիշեր է մնում նա իրանց տանը իբրեւ հիւր: Նրա քոյրը, իմանալով, որ հիւրը հեռաւոր տեղից եկած մի օտարական է, սկսում է հարց ու պորձ անել նրանից թէ արդեօք չէ տեսել Եւրօպայում իր եղբորը, որ քան տարի առաջ հեռացել է հայրական տանից եւ չէ երեւում: Չը կամենալով սկզբից եւ եթ ազմուկ բարձրացնել, խախտել այն զաղտնապահութիւնը, որ ամենից շատ հարկաւոր էր գործի համար, Իսթայլէը քառամսեայ բացակայութիւնից յետոյ այնքան քաջութիւն ունեցաւ իր մէջ, որ թագգրեց թէ ինքն է այդ եղբայրը, եւ միայն ասաց, թէ մի ժամանակ ճանաչում էր Ֆրանսիայում մի այդպիսի հայի Գոյրը կանչում է եղբայրներին, աւետելով թէ իրանց հիւրը տեղեկութիւններ գիտէ Իսթայլէի մասին: Հաւաքվում են եղբայրները, բայց չեն հաւատում թէ օտարականը ճիշտ է ասում: Նրանք հաւատացած էին թէ այս նոր մարդն էլ մէկն է շատերից, որոնք զանազան ժամանակ եկան յայտնիցին, թէ դիտեն Իսթայլէի տեղը, փող ատացան, բայց յետոյ երեւեց, որ խաբեւանք էին: Այս սրտառուչ տեսարան էլ չէ կարողանում հարկադրել Օրին բացվել իր եղբայրների առաջ: Այդպէս էլ մնալով անձանօթ ու օտար հիւր, նա քնեց հայրական յարկի տակ: Իսկ միւս օրը, թողնելով իբրեւ յատակ իր ժամացոյցն ու մի քանի մեղադրանք, նա հեռացաւ գնաց իր գործին:

(Կը շարունակվի)

սեպտեմբերի 1-ին եւ կը տեւէ մինչեւ դեկտեմբերի 15-ը իսկ երկրորդ սեպտեմբեր 15-ին մինչեւ մայիսի 1-ը: Դասականութիւններ լսել եւ գործնական պարապմունքներով զբաղվել կարող են միայն այն կանայք, որոնք ունեն դեղագործի օգնականի վկայական, առանց կրօնի խորութեան, համաձայն այդ մասին դրոշմներն ունենող օրէնքներին: Այն անձինք, որոնք անող քննութիւններ կը բռնեն կուրսերում, ստանում են վկայական, որ իրաւունք է տալիս նրանց ընդունված կարգով քննութեան ենթարկվել համալսարանների բժշկական ֆակուլտետներում եւ զինուորական բժշկական ակադեմիայում: Այժմ Մոսկովայի բժիշկների ընկերութիւնը որոշում է ներթափանց անհրաժեշտ միջոցներ, որպէս զի կարողանայ օգուտ քաղել ստացած իրաւունքից:

«Привз. Край» լրագրին հետադրում են Պետերբուրգի, թէ լուրերին նայելով, պետական խորհուրդը կրօնով չափ պակասացրեց ոսկու լեւնային հարկը եւ փոխարինեց նրան արդիւնաւորական տուրքով: Բայց զրանից, հաւանութիւն է տուած նաեւ այն նախագիծին, որով հանքերում ստացված ոսկին կարող է աղատօրէն ձեռքից ձեռք անցնել, առանց նախօրօք պետական գանձարանին ներկայացնելու պարտաւորութեան:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 17-ին դերասանուհի օր. Ա. Մ. ինքնաբերական, տեղիս թատերասերների մասնակցութեամբ, «Երկաթե թատրոնում» տուեց «Գնչուհի Զանգա» դրաման եւ վերջին էլ «Կարմիր Բրիւլ» վոդևիլը: Բաթումում հայերէն լեզուով ներկայացումներ շատ հազիւ լինելու պատճառով եւ այս ներկայացման բարի նպատակը աչքի առաջ ունենալով, մեր հասարակութիւնը շատաւել էր թատրոն, որ լինէր էր բազմութեամբ: Իսկ թէ մի քանի առաջնակարգ նստարաններ եւ լոժաներ դատարկ էին մնացել, այդ մեր բուրժուազականութիւնը է, որը «խաթի» թէ «բարեբարութեան» համար ընդունում է տոմսակ եւ չէ բարեհաճում ներկայ լինելու ներկայացման: Դաւով խորին, պէտք է ասել, որ նա անբաւարար էր. ընդհանուր առմամբ դերակատարները լաւ չէին սովորել իրանց դերերը: Մեր թատերասերները խումբը դեռ առաջին անգամն է, որ այսպէս անպատրաստ է բեմ դուրս գալիս: Մեր թատերասերների չընթանում միտք կայ այս առաջիկայ տոներին մի երկու ներկայացում տալու հայերէն լեզուով: Յուսով ենք, որ մեր հասարակութիւնը սիրով կը յաճախէ ներկայացումները:

ՉԻՍՏՈՒՐԻ կայարանից մեզ գրում են. «Ձիատուրի մի փոքրիկ տարածութիւն է՝ չըրջապատված մարգանցի հարուստ հանքային լեւնեքով, որոնք 4—5 տարի առաջ գրեթէ բոլորովին զանցատուութեան եւ անուշադրութեան էին մատնված: Այն ժամանակ շատ քիչ էին զբաղվում մարգանցի արտահանութեամբ, եւ 1—2 յոյս վաճառականներ կային, որոնք շատ քիչ քանակութեամբ մարգանց էին ուղարկում Եւրոպա: Անա այսպէս յամրաքայլ ու դանդաղ կերպով էր առաջ գնում տեղիս մարգանցի արտահանութիւնը եւ վաճառականութիւնը, եւ Ձիատուրիում համարեա մեծութիւն էր տիրում: Բայց երկու-երեք տարվայ ընթացքում Ձիատուրին կերպարանափոխվեց, մարգանցի արտահանութիւնը վիթխարի քայլերով սկսեց առաջ ընթանալ եւ վաճառականութիւնը մեծ ծաւալ ստացաւ, որովհետեւ նախ, որ տեղիս մարգանցը Եւրոպայում գրեթէ առաջին տեղը բռնեց իր լաւութեամբ, եւ երկրորդ այն ժամանակ Եւրոպայում մեծ պահանջ կար մարգանցի. դրա համար էլ Ձիատուրին շատերի ուղադրութիւնը գրաւեց, մասնաւոր յոյների եւ վրացիների, շատ քիչ թուով ռուսների, եւրոպացիների եւ հայերի, եւ անա այսպէս, կապալառուների թիւը հասաւ մինչեւ 300—400-ի, իսկ վաճառականների թիւը տասնեակներ, որոնք մեծ քանակութեամբ սկսեցին մարգանց ուղարկել Եւրոպա: Այսպիսով Ձիատուրին սկսեց արագ-արագ մեծանալ—հարստանալ, 500—600 բուրջի ունեցող անհատը տասնեակ հազարների տէր եղաւ: Հարստացաւ նախապէս երկաթուղային վարչութիւնը, որը փառաւոր կայարան չինաց, եւ աւելացրեց երկաթուղու գծերը, որպէս զի մարգանցի փոխադրութիւնը արագ եւ հեշտ կերպով լինի: Բայց ամիսս, որ այդ կենդանութիւնը շատ չը տեւեց, եւ Ձիատուրին ընկաւ նորից առաջվան այն նեղ սոսկալի դրութեան մէջ, որովհետեւ նախ վաճառականները սկսեցին խարդախութիւններ բանցնել, փո-

խանակ լաւ ապրանք ուղարկելու Եւրոպա, սկսեցին ուղարկել շատ վատ ապրանք, հասարակ հող էին խանութ մարգանցի հետ եւ այնպէս ուղարկում, երկրորդ այժմս Եւրոպայում մարգանցի շատ պահանջ չը կայ, եւ երրորդ՝ նաւերի փրակտոր աւելացաւ. ահա դրանք են պատճառը, որ 2—3 ամիս է Ձիատուրիի գործերը շատ վատ են ընթանում եւ ֆինանսական դրութիւնը սոսկալի է այստեղ, ամեն ոք չուարված եւ կաշկանդված մնացել է. այստեղ թէպէտ կան 150—200-աչափ մարգանցի պահեստի կայանք—պլանտացիաներ, որոնք արժեն տասնեակ միլիոն բուրջի, բայց, դժբաղդաբար, այսօր այդ պլանտացիաները թողնել էլ անգործութեան են մատնված, որովհետեւ վատ ապրանք լինելու պատճառով, ոչ մի վաճառական չէ ուղարկում Եւրոպա, բացի երեք վաճառականներից, որոնց ապրանքը լաւ է եւ մի եւ նոյն ժամանակ արդէն ժամանակին մեծ քանակութեամբ ծախել են. այդ վաճառականներն են՝ Փոպոուտ, Բանաւա եւ Յովհաննիսով, որոնք ձեռքումն է տեղիս մարգանցի վաճառականութեան ասպարէզը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՖԻՐՄԱՆԸ

Թաւրիզից մեզ ուղարկված է Իրանի միապետ Մուզաֆէրէդին Շահի այն ֆիրմանի թարգմանութիւնը, որ նորերս չնորհեց Պարսկաստանի հայերին բարձր դպրոցներ բաց աւելու մասին: Տպագրում ենք այդ թարգմանութիւնը առանց փոփոխութիւնների:

«Այն օրից, ինչ Գէյան փառահեղ թաղաւորների գահը եւ Իրանի կայսրութեան Շահնշահութիւնը մեր Օգոստոսիաւ անձնաւորութեան վիճակից, իբրեւ երախտապիտութիւն առ Աստուծային նախանձամբութիւնը, մենք տարածելով մեզ չնորհած ողորմութիւններն ճառագայթները մեր կայսրութեան բոլոր բնակիչներին վրա, ինչ ազգի եւ ցեղի ու կրօնի պատկանէին նրանք, եւ ամենքին հայրենիքի որդիներ համարելով՝ ամեն առիթով եւ ամեն պարագայում նրանց բարօրութեան համար ոչինչ չը խնայեցինք: Յոյս ունենք, որ ամենակարող Աստուծո Օգնութեամբ աւելի քան ցարդ վաշխելով երկնային օծանդակութեան չնորհ՝ մեր այս սուրբ պարտականութեան մէջ աւելի աւջողութիւն գտնենք:

«Եւ արդ, մի բան, որ մեր արտի բարի իշգծերի հետ կատարելագոյն համապատասխան է, այն է, որ մեր կայսրութեան հայ ազգաբնակիչները, որ հին ժամանակներից ի վեր ապաստանած է առ ոտս պարսից արքայական գահին, եւ որը մշտական հաւատարմի հպատակութեան եւ հայրենասիրութեան ապացոյցներ է տուել, այժմ մտադրել է իր դպրոցների թիւն աւելացնել եւ թէ՛ ճիւղերում, թափվածութեւն Պարսկաստանի այլ գաւառներում հաստատել մի քանի կենտրոնական նշանաւոր դպրոցներ եւ այս առիթով մեր Օգոստոսիաւ վեհափառութիւնից արտօնութիւն է խնդրել այդ զբաղողները բացման համար: Հայերի այդ նպատակը մեր արտաբերվել փափկանքների հետ ամաճայն գտնելով եւ նկատելով, որ այդ նպատակը մեր հպատակների առաջադրութեան պատճառ պիտի դառնայ կրթութեան, արհեստների եւ երկրագործութեան ասպարէզներում, եւ վաճառականութեան զարգացման մղիչ պիտի հանդիսանայ, այն հոգի արքայական ֆիրմանով չնորհում ենք նրանց արտօնութիւնը Պարսկաստանի հայ դպրոցների բացման համար, եւ այդ դպրոցները մեր մասնաւոր հոգածութեան եւ պաշտպանութեան տակ առնելով հրաժարում ենք, որ այն դուռները, որոնք այդ ձեռնարկութեան համար յատկացվելու են, գործադրվեն նոյն գործի ձեռնարկողների եւ հոգաբարձուների մշակվել կանոնադրութեան համեմատ որոշված ծախսերի համար: Ընդհանրապէս բոլոր հաստատված դպրոցները մեր արքայական անձնաւորութեան պաշտպանութեան տակ գնելով, հրաժարում ենք, որ մեր բոլոր պաշտօնեաները ամեն տեսակ աջակցութիւն եւ օգնութիւն նուիրեն նոյն սուրբ գործի աջողութեան համար:

Տրված Բէշէր ամսին 1318 թուի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պրանսիական սենատը ընդունեց ներման օրէնքը այն ձեւով, որ ձեռով օրինագիծը հաւանութիւն էր դրել պառլամենտարների ժողովում: Անհատում տեղի ունեցած վիճաբանութիւնների մէջ ամենից աւելի ուղարկութիւն գրաւեց Տրարիէի ճառը: Նա ապացուցանում էր, որ

թէ երկրի մէջ խաղաղութիւնը կարող է վերականգնվել ոչ ներման միջոցով, որ մի կարգի մէջ է դասուած թէ յանցաւորներին եւ թէ հերոսներին, այլ կատարեալ ազատութիւն տալով դատարանին, որ կը կարողանայ ջոկել անմեղներին մեղաւորներին: Առանձնապէս նա պնդում էր այն բանի վրա, որ ներումը չը վերաբերվի այդ անմեղներից մէկին—գնդապետ Պրկարին: Արդարադատութեան միջոցաւ ոչ մի պատասխան չը տուեց Տրարիէին. ամբիօն բարձրացաւ ինքը մինիստր-նախագահը: Նա կրկնեց այն, ինչ որ մի քանի անգամ յայտնել էր եւ առաջ, այսինքն, թէ ներման օրէնքը արդարութեան կամ զիջութեան գործ չէ, այլ քաղաքական անհրաժեշտութեան: «Ես կրկնում եմ—ասաց Վալդէ-Բուաւո, որ պահանջում եմ սենատից մի քաղաքական գործ կատարել: Բանը այն չէ, որ ղեկավարվելով այս կամ այն անձի մասնաւոր շահերով արդարադատութեան կողմ վրա դնենք յայտնի փաստերը, այլ այն, որ քուէարկենք մի այնպիսի միջոց, որ անհրաժեշտ է Պրանսիայի խաղաղացման համար: ամբողջ Պրանսիան ծառաւ է այդ խաղաղացմանը: Չը պէտք է մոռանալ նաեւ այն, որ մենք չուսով մի ուրիշ, աւելի վճռական պայքար պէտք է վարենք (ակնարկ կրօնական միաբանութիւններին վերաբերեալ օրինագիծի մասին), ուստի եւ պահանջում ենք, որ դուք իւրեք մեր հակառակորդների ձեռքից այն դէպքը, որից նրանք վաղուց է որ օգուտ են քաղում:

«Matin» լրագրից, յենվելով Լոնդոնի «Natur» գիտնական ամսագրի, «Astronomische Nachrichten»-ի եւ Պարիզի աստղագիտական դիտանոցի տեղեկութիւնների վրա, պատմում է, թէ Յուպիտերի գիտնացումը, Արեգոյն շատում, աստղագիտ Դէզլան, որ յայտնի է իր քաղաքիւն աստղագիտական հետազոտութիւններով, նկատեց Մարսի վրա մի երեւոյթ, որ չէր կարող պատահական լինել եւ անկասկած ցոյց է տալիս, որ այդ մոլորակի վրա կան բնական էակներ: Դէզլան յայտարար տեսաւ կրակներ մի ամբողջ շարք մի քանի հարկեր կիրովտոր տարածութեան վրա՝ շարված բոլորովին ուղիղ գծով: Մի ժամ եւ 10 րոպէ անընդհատ լույս տալուց յետոյ՝ այդ կրակները հանգան յոյնպէս յանկարծ, որպէս եւ յանկարծ երեւացել էին Որովհետեւ յայտնի է, որ լույսը երբեք չէ երեւում երկրաչափական ձեւերով, ուստի Մարսի վրա նկատված կրակների ուղիղ գիծը ապացուց է, որ նրանց ղեկավարում էր մի կամք: Նոյն բանի ապացոյց է եւ կրակների միաժամանակ երեւալն ու միաժամանակ անկայանալը: Դէզլանը դիտողութիւնը կատարվեց դեկտեմբերի 8-ին: Մոլորակի հակադրութիւնը կը սկսվի միայն փետրվարի 9-ից, այս պատճառով լույս կը տեսնուի մինչեւ այն ժամանակ կը կատարվեն շատ դիտողութիւններ, որոնք եւ հաստատապէս ցոյց կը տան այս կարծիքի ուղիղ կամ սխալ լինելը:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Մ Ա Ն Բ Ա Ն Կ Ա Ր

Պէտք է անսխառնաժող փաստաբանութիւն ստվործել, թէ չէ՝ բան վատ կը լինի: Ինձ դէմ սպանում են դատ բանայ իմ «Մանրակարի» մէջ անհանադրած ազգաւոր-հերոսները:

Սպանակները սպանակներն են ետեւից: Եւ այն էլ սպանում են շատի կանչիլ դիֆֆամացիայի օրէնքով: Այսինքն պէտք է ինձնից պահանջին գրաւոր դիմումներն իմ դրամները հաստատելու համար:

Դուք կանգ, որ դիֆֆամացիայի օրէնքին դիմելը արդէն խալտառակութիւն է: Բայց դուք ունից ինչ էք պահանջում:

Դատ Շատ լաւ:

Հանկույտ ասպարէզ:

Ի դէպ՝ չուսով կուսնանք մի քանի ուրիշ հետաքրքրական դատեր: Կաղուտանի յայտնի բարերար Չաքարիա Զանփուրդեանը դատ է սկսում «Մշակի» Կաղուտանի երկու թղթակիցներին՝ Ա. Տէր-Ներսիսեանին եւ Մ. Ղազարեանին, իսկ Կաղուտ յայտնի Նիլիզ վարդապետ Մուրադեանը Զանփուրդեանի դէմ:

Կը պահանջվին բազմաթիւ վկաներ:

Ինչ էք կարծում, որքան:

Ով գիտէ ամբողջ Կաղուտան քաղաքի ազգաբնակչութեան մեծագոյն մասը:

Այ կը լինի չեղք տեսարան:

Դատը իր կարգով, բայց լրագրական հերքումն են էլ իրանց կարգով:

Աստուծոյ մի արասա՛յ՝ մէկի մասին ասես երեք տող մի բան: Նա ձեզ կը պատասխանէ երեք հարկեր կամ երեք հազար տողով:

—Իմ հերքումը պէտք է տպվի անփոփոխ եւ լիովին, այսպէս կը դիմեմ օրէնքի ոյժին: Այս բաներով ճանապարհ է ձգվում հերքումը դէպի խաղաղատուն:

Ի հարկէ խեղճ գոհարները պէտք է անփոփոխ պահպանել:

Անգրագէտ, շատախօս, անխառն, անկապ հերքումներ՝ անփոփոխ տպվելու պայմանով: Ինքուր է:

Անէծք, թէ օրհնութիւն: Երեւանի թեմական դպրոցը, չար ու բարի տեսնելուց յետոյ, այժմ մի տեսակ նաւահանգստի է հասել: Նա գտն է իր ներկայ տեսից, որի օրով նա յոյս ունի կարգի բերել իր բոլոր դպրոցները:

Բայց միթէ չէք ցանկանայ, որ այնտեղ դարձեալ տեսնուի նշանակիլ բժիշկ Շահ-Նազարեանը: —Ինչպէս, վրդովված հարցնում է ընթերցողը, միթէ յայտնի չէ, որ Երեւանի թեմական դպրոցի թէ հոգաբարձութիւնը եւ մանկավարժական ժողովը եւ թէ աշակերտները փառք են տալիս այն օրին, երբ ազատվեցին Շահ-Նազարեանի նման անշնորհ, անտախտ, խնամալ տեսից:

Այդ այդպէս է, պարոն ընթերցող, ես եւս ձեզ հետ համաձայն եմ: Բայց Վիէնայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը...

—Ինչ դործ ունի նա այս հարցում:

Ոչինչ, ոչ մի գործ: Նա միայն բարեմաղթութիւններ է անում:

—Հետաքրքրական է:

Ահա ինչ է ասում Միխիլայեան միաբանութեան բերանը:

«Երանի թէ մեր միւս ազգային վարժարաններն ալ ունենային մէյմէլ Շահ-Նազարեաններ, որոնց «Գերմական ցանկութիւն» ըլլար դպրատանց մէջ որոշ ծրագիր մ'ու կարգ կանոն խոթեր:

Պէտք է խոստովանեմ, որ ես սկզբում կարծեցի թէ «Հանդէս Ամսօրեայ» խմբագրութիւնը կատակ անելու արամադրութեան մէջ է եւ ծաղր է անում: Նորից ու նորից կարգադրեցի:

Ոչ, Լուրջ է ասում:

Ձեզ եւ հարցնում՝ օրհնութիւն է դա, թէ անէծք:

Մանօթ թուշներ, ծանօթ ձայներ, ծանօթ դայալիկներ:

Արդեօք ուշք դարձրեք դուք այն թղթակցութեան վրա, որ տպված էր «Մշակի» մէջ մի տասն օր օրանից առաջ եւ վերաբերում էր Երուսաղէմի հայոց վանքի դպրոցներին:

Թիշիցնեմ մի քանի կէտեր:

Վանքում կայ մշտապէս գործող մի տնօրէն ժողով, որ պէտք է գտնէ եկամուտները, անէ ծախսեր, բայց որը մի եւ նոյն ժամանակ ունի պարտականութիւն...

Դարձեալ պարտականութիւն: Սակայն ինչ է այդ պարտականութիւնը:

—Տարին մի անգամ հաշիւ տալ միաբանութեան բոլորանոր ժողովին վանքի երեւուածքի եւ գործառնութիւնների մասին:

Անցնում են, անցնում տարիներ:

Բայց չը կան ու չը կան հաշիւներ:

Հին տնօրէն ժողովը, մնալով եօթ տարի իր պաշտօնի մէջ, չէ բարեհաճել տալու իր եօթ տարվայ հաշիւները:

Այժմ գործում է նոր տնօրէն ժողով: Արդեօք սա պէտք է հաշիւ տայ, թէ ոչ:

—Ի հարկէ, ի հարկէ, միայն թէ պէտք չէ չտալ:

Նոյն վանքում կայ մի ամենաազօր միջնորդ եւ այն էլ ֆինանսների միջնորդ:

Նրա պաշտօնը վանքի մէջ յայտնի է ճշմարտից տեսնելով անուշով:

Այդ միջնորդը թէ նախորդ եւ թէ ներկայ տնօրէն ժողովների ատենապետն է:

Նա ներկայանում է իբրեւ դիւցազնիւրդական մի անձնաւորութիւն, որի մասին անա ինչ է ասում տարեգրութիւնը:

«Նա բոլոր գործերը իր ձեռքին մէջ ժողոված է:

«Եւ ամպերէն վար չիջներ:

«Ոչ ոքի չի ներեր իր գործին խանդելու:

«Անեղ, տալ, գնել—միմիայն իր բացարձակ իրաւունքն է:

«Նա է, որ համարատուութիւնէն խոյս կու տայ:

«Եւ ոչ իսկ տնօրէն ժողովը կարող է հարց ու փորձ անել զինքը:

«Ու եւ է դիտողութիւն աստիկ կը զայրացնէ զինքը...

«Ամենքն ալ, պատրիարքով մէկ տեղ, անոր կանակատար ստորկներ են»: (Տես «Մշակ» № 131)

Ահա ձեզ մի դիւցազն, Ահա ձեզ մի Գողթաթ, Ահա ձեզ մի վիշապազուն:

Ճանհիճ մէջ:

Սակայն վանքի մէջ սկսվել է մի քանի օրվապիականների դէմ: Մեր ժամանակի քայքայիլ օգին կողմ է յայտնի դիւցազններին:

«Վանքը յուզման մէջ է: Կենսատու հով մը սկսած է փչել անապո ճանհիճ մէջ:

Տասնեւութ անձ վարդապետներից եւ սարկաւագներից ներկայացրել են պատրիարքին մի գրութիւն, որով պահանջում են շուտով գումարել միաբանութեան ընդհանուր ժողովի եւ այդ ժողովին ներկայացնել տնօրէն ժողովի հաշիւները:

Որպիսի յանդիմութիւն:

Որպիսի ըմբոստութիւն:

Սակայն միթէ ձեւ չը կայ հեռացնել խոռվարդներին:

Կայ, ի հարկէ:

Լսենք թղթակցին:

«Վանքերու հին ախան է ասիկա՝ հեռացնել, հեռաւոր անկիւններ ձգել այն անձինքները, որոնք յանդիմութիւն կուենան վաճառական վարչութեան թուութեան երեսէն տեղի ունեցած անհաւատարմութիւններու ու զեղծումներու դէմ խօսել եւ բողոքել:

Այժմ Երուսաղէմի մէջ մի եւ նոյնք տեղի կուենայ

Ի՞նչ կատարեց:
Ծանօթ չէ՞ ձեզ այդ բոլորը:
Անկատարած ծանօթ է:
Ծանօթ թույլուններ, ծանօթ ձայներ, ծանօթ
դալարներ:

Վրձին

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ԽՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

20 դեկտեմբերի

ԿՕՎԵՆՈ: Նեմանը ծածկվեց սառուցով. ցուր-
տը հասնում է 20 սանտիմետրի:
ԱՍՏՐԱՆԱՆ: Վոլգան ծածկվեց սառուցով.
ցուրտը 12 սանտիմետր է հասնում:

ԽԱՐԿՕՎ: Սաստիկ ցրտեր է անում:
ԿՕՎԵՆՈՎ: Բոլշևիկները հասան մինչև Բո-
ղոթաբադ, Միլիտերովի գեպի հարաւ: Մի-
գեպի բոլոր հասան նշանաւոր թուով անգլիական
օդակազմի զորքեր:

ՀԱՄԳՈՒ: Կրիկերի թեթեւ բրոնխիտ ունի եւ
պտուկած է անկողնում:

ԲԵՐԼԻՆ: Վաղերից է հաղորդում է Պեկի-
նից, թէ Գրեյերի զորաբաժինը դեկտեմբերի
16-ին վերադարձաւ Եաննին: Մադարի զորա-
բաժինը, տեղեկութիւն ստանալով, որ Միու-
ենհայնի մօտ դեռ եւս չկանական զորքեր կան,
չեղեց ճանապարհը Տուն-Չօուից դէպի հիւ-
սիս: Նրանց ետեւից ուղարկված են էլի երկու
բաժաններ Տուն-Չօուի վրայով:

ԼՈՆԴՈՆ: Համաձայն «Daily Mail»-ի ստացած
տեղեկութեան կապիտալիզմը, մինչև այժմ
կապի զաղթականութեան օսմաններին ներս
խուժած թույլների թիւը հասնում է 5000-ի:

Պեկինից հաղորդում են, թէ անգլիական
դեսպալ Սաստիկ հիւանդացի է պիւլմոնիտով:

ԼՈՆԴՈՆ: Դեկտեմբերի 19-ին հաղորդում են
Պեկինից, թէ դեսպանները որոշում կայացրին
խնդրելու չինական լիազօրեւորին, որ նրանք
զրաւոր կերպով ներկայացնեն այն հարցերը,
որոնք վերաբերում են միացած յայտադրին:
այն ժամանակ կը կայանայ նոր ժողով: Այս-
պիսով, երեւի, դեռ չստ ժամանակ կանցնի,
մինչև որ պատասխանը կը ստացվի:

ՆԻՒԵՐՈՎ: Պեկինից ստացված հեռագրի
համաձայն՝ Լի-Պունց-Չանգ մի խօսակցութեան
մէջ յայտնեց, թէ կայսրը բոլորովին պատրաստ է
համաձայնվելու պետութիւնների պահանջներին,
բայց այն հայեացքն ունի, որ բազմաթիւ ար-
շաւանդները, որոնք զրգուտ ու եղբայրական-
ութիւնը, նշանաւոր չափով վնաս են տալիս: Կայս-
րը համաձայն է պետութիւնների կողմից մատ-
նացույց արած բարձրատիման պաշտօնեաներին
պատժելու: Զարգացող նրանք հեռաւոր նա-
հանգներ եւ արդիւրով յետ դառնալով ժամկետ
պատժի սպառնալիքով: Լի-Պունց-Չանգ յայտ
յայտնեց, որ պետութիւնները զորքեր կը թող-
նեն միայն Պեկինում, Տեաննինում եւ երկա-
թուղիները գծի վրա: Զինաստանը կաշառե
խաղաղակցի երկրորդ:

ՆԻՒԵՐՈՎ: 1900 թուի հաշուով կեանքի փո-
խադարձ ապահովագրութեան «Լիւ-Եօրի» ըն-
կերութիւնը 1900 թւին 464 միլիոն ռուբլու
նոր ապահովագրութիւններ է կատարել, հաշ-
ւելով եւ Ռուսաստանում կատարածները, այ-
սինքն 60 միլիոնով ավելի, քան 1899 թւին,
Ապահովագրութիւնների ընդհանուր գումարը
աւելացել է 280 միլիոն ռուբլովով: Ռուսական
պետական բանկում, Ռուսաստանում ապահո-
վագրվածներին ապահովելու համար, կար մին-
չեւ նոյնքանի 1-ը ավելի քան տասն եւ մէկ
միլիոն ռուբլի:

21 դեկտեմբերի

ԿՕՎԵՆՈՎ: Բոլշևիկի զորաբաժինը երեւաց
Գրեյգարիում, որ երկաթուղու մի կայարան
է Գրաւֆերդինգտի հիւսիսակողմում:

ՀԱՄԳՈՒ: Կրիկերի արդէն մի քանի օր է,
որ տանջվում է կրկնված բրոնխիտից: Ի նկա-
տի առնելով նոր հասարակ եւ այստեղի կլիմա-
յական պայմանները, այդ հիւանդութիւնը պա-
հանջում է առանձին նախազգուշութիւններ:

ԿԵՕԼԻ: Պեկինից հաղորդում են, թէ կայ-
սերական հրամանով պատուիրված է Լի-Պունց-
Չանգին եւ Յինին յայտնել, որ պետութիւն-
ների միացեալ յայտարարի պայմանները ըն-
դունված են չինական կառավարութիւնից:

ԼՈՆԴՈՆ: Կիտայներ հեռագրում է Պրետո-
րիայից: «Գրեյերի» Նօլի հաղորդում է, թէ Դե-
վետ փորձ փորձեց վերցնելու Բեթղեմէմը, բայց
նրան խանգարեց Պիլիքը, ստիպելով նահանջել
դէպի Լինդլէյ կամ Բէյց: Հեծեալ հետեւակներ
մի պօրաբաժին, Կրօնտարդից զուրս գալով,
հանդիպեց յանկարծ դիմադրութեան, բայց
նրան աջողվեց քիչ կորուստով անցնել երկա-
թուղու գծի վրայով եւ առանց մեծ կորուստների

— Զիւղերֆօնէնցի: Միլիտերովից դէպի հա-
րաւ-արեւմուտք Վիլիամս հարկադրեց բօթ-
ներին կուր բռնվել նրա հետ: Անգլիացիները
զրաւեցին Գրաւֆերդինգտի:

ՆԻՒԵՐՈՎ: Պեկինից հաղորդում են, թէ
այնտեղ եռանդով ըննադատվում է այն փաս-
տը, որ ի պատիւ Վիկտորիա թագուհու տեղի
ունեցած անգլիական զորքերի զօրահանդէսի
ժամանակ, ֆրանսիացիները ներկայացուցին
չուղարկեցին, այն ինչ միւս բոլոր պետութիւն-
ները արին այդ բանը:

ԽՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի տեղեկութիւն այն անձերի, ո-
րոնք Թիֆլիս քաղաքում ձերբ ունեն, որ, հա-
մաձայն քաղաքային վարչութեան որոշման՝ ե-
կող տարվայ մարտի 13-ից, ձերբի համար
ժամանակին չը վճարած տուրքի յօդուտ քաղա-
քի վերջով տուգանքը առաջիկայ 1901 թւից
կը վերցվի նաեւ ապառիկների դուրսից ոչ
24%-ի չափով, այլ միայն 18%:

1—3

Մ Ե Ղ Ր

Վաճառվում է 25 կ. ֆունտը, Յ. Մէլիք-Բախ-
տանանի խանութում, Սոլոյակի փողոց, № 6:

1—6

Ծարունակվում է

ՊԱՏԱԿԵՐԱԶԱՐԻ

ԵԶԳԵԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԻՍԻ

VII եւ VIII գրքերի

Բ ա ժ ա ն ո Ր Գ ա զ Ր Ո Ւ Թ Ի Ն Ը
երկու գրքի բաժանորդագրին է 3 ռուբլի:
Կարելի է ստանալ նաեւ նախորդ գրքերը
բաժանորդագրական գնով:
Դիմել՝ Երանդ Լալայան, Саперная 5
կամ Семеновая Персиянъ, Тифлисъ.
(ե. ո.) 8—15

Մ Ե Ղ Ր

Ո Ս Կ Ե Գ Ո Յ Ե Ի Հ Ո Տ Ա Ի Ե Տ
Ս. Միլիտերովի մեղադրանքից
ծ ա լ Վ Ո Ւ Մ Է
Ֆրէյլինսկայա փողոցում, № 14 տան մէջ:
Պուրը 9 ռուբլի:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍԻՔ

Ընթերցանութեան ձեռնարկ կրտսեր դասարան-
ների համար, համառոտ բառգրքով:
Կազմեցին Կ. Կուսիկեանց եւ Լ. Սարգսեանց,
ուսուցիչներ Լազարեան ձեռնարանի:
ԳԻՆԸ 70 ԿՕՊԵԿ

Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրա-
վաճառանոցում: 7—10

Պետերբուրգի բժշկական վարչութեան թույ-
տութեամբ: Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոք-
րը—3 ռ. եւ 1 ռ. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մազերը բուսնելու եւ ամրացնելու համար,
ոչնչացնում է թեփու: Դուրս է եկել նաեւ
բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԷ

Երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տա-
լու համար, ոչնչացնում է արեւի պատճա-
ռած սևութիւնը, մուգները, տալիս է կա-
շտին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ
գինը չափաւոր են. մեծ արուակը, արկղի-
կի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ռ. 50 կ.
Մաքսիմում են բոլոր պարֆյումերական եւ
դեղավաճառական խանութներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինսկայա փողոց տ. № 15, քնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կուկաւեան դե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում: Սրեանեան հրապարակ
եւ նրա բաժանմունքները, Միլայեւեան փո-
քի եւ Բազում. նաեւ Միլայեւեան կամուր-
ջի վրա, Պապովի եւ Արիտաւովի դեղատո-
ներում: Օտարաբաղաճայի պատուէր-
ները կատարվում են անմիջապէս՝ պօստով:
29—100

„Շ Ղ Թ Ա Յ“

ՆԱԽԱՐԱՐԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի դիմութիւն ընկերութեան պ. պ. փայտէրերի, որ նոր բաց թողած փայտէրը
կարելի է ստանալ 13-ից մինչև 23-ն դեկտեմբերի, ընկերութեան գրասենեակում,
երեսանեան հրապարակ, տուն արկին Խարաղեանի, գաւթում Նոր փայտի ստանալու համար
փայտէրերը պէտք է մտցնեն փայտ արժողութեան 15%, եւ ներկայացնեն իրանց հին փայտերը:
3—5

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՐԷՔ



Որովհետեւ համաշխարհային հռչակ ունեցող «Louis Roederer»-ի պա-
տեղ նկարված յայտնի մարիլ տեղիք է տալիս կեղծիքների եւ նմանու-
թիւնների, ուստի առեւտրականների եւ սպառողների ուշադրութիւնն է
դարձնում հետեւեալի վրա:

Ոչ մի առեւտրական տուն, նման մեր ֆիրմային, չէ կարող յա-
ւակնութիւն ունենալ, թէ որ եւ է ազգակցութիւն կամ այլ յարաբե-
րութիւն ունի «Louis Roederer» հին առեւտրական տան հետ, որի ծա-
գումը վերաբերում է անցեալ դարի վերջին (թէպէտեւ մենք երբեք
չենք նշանակել այդ ոչ մարկաների եւ ոչ էտիկետների վրա):

Ամեն մէկից, որ ցանկանում է ստանալ ի սկիւան Լուի Բեդե-
րեր (Louis Roederer) խնդրվում է գննել եւ ստուգել խցանը եւ չընդունել այն չիչերը, ո-
րոնք չեն կրում յիշեալ մարկը: Ապագայում կեղծիքը եւ նմանութիւնը աւելի դժուարացնե-
լու համար, մեր չիչերը կունենան բոլոր կոնտր-էտիկետները, իսկ խցանները կամրացվեն նոր
ձեւով, որ հնարաւորութիւն կը տայ վարկենապէս բանալու չիչը, առանց ուրիշ որ եւ է
զործիքի օգնութեամբ:

Զմուռի փոխանակ գործ կամ լի մետաղայ գլխաւոր:

2—3

Ս ա թ զ ի ս Վ. Ա թ թ ա ի ա լ ե ա լ

Հասցէ. ՍՕԼՕԼԱԿ, Դանօվսկայա փող. տ. Թամաշէլի, № 26, բն. № 9.

Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեւի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշ-
խաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարագայումը-
ների գանձելու համար

Հ Ա Հ Ո Ւ Ն Պ Ա Հ Ո Ւ Թ Ի Ն

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտե-
ական, նախարհիւնարական, գործարանական, առեւտրական, բանկային եւ չոյն-
նաւային հաշուապահութիւն:

2) Առեւտրական թուաբանութիւն:

3) Առեւտրական թղթակցութիւն:

4) Պարտաւորական օրէնքները:

5) Գեղարդութիւն, ուսումնասիրութիւն զանազանտեսակ չրիֆաների եւ ուղ-
ղումն ամենալատ ձեւերով:

ԵՐԱՐՈՐԻ ԳԱՐԱՆՈՒՄԻՍՏՈՐ ՍԿՍԿԵԼՈՒ Ե ՅՈՒՆՎԱՐԻ 15-ԻՑ

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչև 11-ը եւ 4-ից մինչև 7-ը երե-
կոյան: (Յ. ո. չ.) 7—25

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1901 ГОДЪ НА ДВА ИЗДАНИЯ:

Е Ж Е Д Н Е В Н А Я Г А З Е Т А

Н О В О С Т И Д Н Я

Съ портретами государственныхъ и общественныхъ дѣятелей.

ДЕВЯТНАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНИЯ.

Съ 1901 г. газета будетъ издаваться по расширенной программѣ.

Газета отдѣлитъ на своихъ столбцахъ мѣсто всему выдающемуся въ русской и заграничной жизни, отмѣчая событія въ возможной полнотѣ и въ яркой, живой и общедоступной формѣ.

Помимо обширной хроники, въ „Новостяхъ Дня“ помѣщаются ежедневно многочисленныя телеграфныя сообщенія и корреспонденціи отъ собственныхъ корреспондентовъ изъ Петербурга, изъ провинціи и крупнѣйшихъ заграничныхъ центровъ—изъ Парижа, Берлина, Лондона, Нью-Йорка и друг.

Подписная цѣна: на годъ—8 р. На шесть мѣсяцевъ—5 р., на три мѣсяца—3 р., на одинъ мѣсяць—1 р

Е Ж Е Д Е Ъ Л Ы Ы Й И Л Л Ю С Т Р И Р О В А Н Н Ы Й Ж У Р Н А Л Ы

„С Е М Ъ Я“

ДЕВЯТИЙ ГОДЪ ИЗДАНИЯ

Несмотря на свою дешевизну, журналъ „Семья“ представляетъ собою вполне изысканное изданіе, въ которомъ помѣщается разнообразный интересный текстъ, масса портретовъ (іерарховъ Православной Церкви, государственныхъ и общественныхъ дѣятелей, представителей науки и искусства и т. п.) и ри-
сунковъ, относящихся къ злобѣ дня.

Подписная цѣна: на годъ съ доставкой 3 р. „Новости Дня“ и „Семья“ 10 р.—Адресъ: Москва, Красныя ворота, с. д.



ԲՈԹՈԹԻ ՑԵԼՈՒԼԵՍԵՐՆԻ ՍԵՐՄ

Բաղադրի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ

Պարֆորեան դրուքեանք պատրաստված

Հ ս կ ո ղ ո թ ե ա մ ր

Մ Ի Հ Ր Ա Ն Ի Մ Ա Ն Դ Ե Ա Ն Ի

Առաջին կարգի վիպեալ մասնագէտ Պրոսպի Կայսերական Շերամապահական վարժարանէն:

Երկար տարիներէ ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած
եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆԶԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պ ա ս թ է օ Ր ե ա ն
դ Ր ո լ թ ե ա մ ր ընտրված Պաղտատի տեսակ սպիտակ հունտէրէն յատկապէս եւ մասնաւոր
խնամօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած ենք
Շերամապահական կայարանն քննութեան համար:

Ամեն անոնք որք կը փափաքին դիւրամտելիի դիւրեղ լաւ ապրանք գնել եւ ապահով
ըլլալ հունտերու տեսակին վրա, թող հաճին դիմել մանրամասնութեանց համար Մայսուրաձէ
եւ Խօջափարութիւն վարժարանարան № 16—17, Ա. Կ. ԱՐՍԷՆ եւ ընկ. գրասենեակը:
(ե. հ. չ.) 21—30